ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՈՒԵԼ ԲԵԼԳՐԱՆՈՅԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին Երևան քաղաքի Արգենտինայի հրապարակում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՈՒԵԼ ԲԵԼԳՐԱՆՈՅԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանության կողմից ներկայացվել է միջնորդություն Երևան քաղաքի Արգենտինայի հրապարակում գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու համար։

Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանությունը նախատեսում է նաև իրականացնել նույն հրապարակի շրջակայքի բարեկարգման աշխատանքները, հրապարակի ցուցանակների տեղադրումը և արգենտինական մոտիվներով հարակից կամարանցումի նկարազարդումը, ինչը կավելացնի նոր և գրավիչ հանդերձանքով երևանյան կամարանցումների թիվը:

Դեսպանատան կողմից ներկայացված նախագծային փաթեթը քննարկվել է աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում և Երևանի գլխավոր ճարտարապետի կողմից և հավանության է արժանացել: Հարցը համաձայնեցվել է աշխատակազմի արտաքին կապերի վարչության և ՀՀ ԱԳՆ-ն հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՈՒԵԼ ԲԵԼԳՐԱՆՈՅԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՈՒԵԼ ԲԵԼԳՐԱՆՈՅԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ